ԶԱՆԱԶԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա.

ԱՅՐԻԱՑԱԾ ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ԿՐԿՆԱՄՈՒՍՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ.

Յայտնի է որ Վեհափառ Հայրապետը, ի նկատի ունենալով թէ ժողովրդականների և թէ այրիացած քահանաների կողմից տրուած բազմաթիւ խնդիրները դրական կերպով լուծելու վերջիններիս երկրորդ ամուսնութեան խնդիրը, նոյնպէս և այն կէտը, որ այդ խնդիրը լինելով ոչ մասնակի այլ համահայոց, պարունակող թէ հասարակական և թէ կանոնական որոշ հանգամանքներ իւր մէջ, հրամայել էր շրջաբերական կոնդակներով Սսոյ կաթուղիկոսին, Պոլսոյ և Երուսաղէմի Պատրիարքներին, Սինոդին, որ դրանք առաջնորդների ձեռքով խառն ժողովներ գումարեն և տան իրանց դիտումները և կարծիքները վերոյիշեալ խնդրի նկատմամբ։ Առ այժմ կաթուղիկոսական Դիւանը ստացել է Սսոյ կաթուղիկոսի և երկու պատրիարքների գրութիւնները, որոնք բացասական մտքով են պատասխան գրել յիշեալ հարցի նկատմամբ, այդ երեք գրութեան մէջ մի մեծ բաց կայ, այդ այն է, որ այդ կարծիքները միմիայն հոգևորականներինը է, իսկ ժողովրդի ժողովական կարծիքի մասին ոչինչ տեղեկութիւն չկայ, այն ինչ թէ կոնդակներով էր այդ պահանջուած և թէ խնդրի էութիւնը էր պահանջում որ ժողովրդի կարծիքը լսուէր, այն հասարակ պատճառով, որ քահանաները գործում են ժողովրդի մէջ, կրկնամուսնութեան խնդիրը մեծ առնչութիւն ունէր ծխականների նիստուկացի հետ, ուստի և կարծիքներ ժողովելիս Սսոյ կաթուղիկոսը և պատրիարքները ու Պոլսոյ կրօնական ժողովը պիտի մեծ տեղ տային ժողովրդական ձայնին. այդ տեսակէտով երեք գրութիւններն էլ միակողմանի են և խնդիրը այժմէութեամբ չեն բացատրում։ Երուսաղէմի Ցարութիւն պատ-

բիարքը համարելով հակաեկեղեցական, միանգամայն մերժում է այդ խնդրի դրական լուծում տալու հարցը. «Համեմատեցաք զայն ընդ օրէնս եկեղեցւոյ և գտաք հակառակ օրինաց. ուստի համամիտ և համաձայն որոշեցաք ամենեքին զդուշանալ ի բակելոյ զցանկ»: Ցեղոյ համարելով օրէնքը փոքձառութեան վրայ հիմնուած մի դրութիւն, անում է մի շատ անարամաբան եզրակացութիւն— «զի օրէնք հիմնեալ են ի վերայ փորձառութեան, պարտ է պահել զայն ըստ ամենայն պահանջեալ պայմանացն, լուծանելով զմին յօրինաց՝ լուծանին մի ըստ միոջէ ամենեքեանս»։

Սոյ կաթուղիկոսի պատճառաբանութիւնները նոյն ոգով են գրուած ինչ որ Ցարութիւն պատրիարքի, չի կարելի «խրամատել զօրէնսդրական կազմակերպութիւն Ս. եկեղեցւոյ. վասն զի եթէ զաւակունք այրիացեալ քահանայից մնան կարօտ մայրական խնամատարութեան, մնան և զաւակունք այրիացեալ ժողովրդականաց, յորոց բազումք ոչ կամին մտանել յերկրորդ ամուսնութիւն». այս ձևի են գրուած բոլոր դատողութիւնները սոյն խնդրի վերաբերմամբ, որոնք շատ հեռու են խնդիրը պարզաբանելու տեսակէտից և չունեն ոչ մի արժէք ժամանակակից հայեացքների առմամբ։

Այդ գրուածքներից պատճառաբանուած է Պոլսոյ պատրիարքի և կրօնական ժողովի կողմից ուղարկուածը, որև արժէ ուշադրութեան առնել։ Քահանաների կրկնամուսնութեան խնդիրը մերժելու աղբիւրներ համարում են առաքելական օրէնքը, թէ սարկաւագները պիտի լինին «միոյ կնոջ այր». սոյն սովորութիւնը բոլոր եկեղեցիք պահած են, նոյնպէս և մերը, նոյն հիմամբ էլ չի թոյլ տուում այրիացած աշխարհականների ձեռնադրութիւնը, ինչպէս և Մաշտոցում որոշակի գտնում է մինչև չորս աստիճանի ամուսնանալու իրաւունքը և հինգերորդ աստիճանից սկսած չամուսնանալու արգելքը։ Ապա խօսելով քահանաների ամուսիններ փնտռելու տգեղութեան և անյարմարութեանը վրայ, նոյնպէս և չամուսնացած և

այրի մարդկանց քիչ տակոս չլինելուն (նրանք ի նկատի են ունեցել Պօլիսը) վերաբերմամբ և այն մասին որ երկրորդ ամուսնութեան մէջ մտնել ցանկացող քահանայք կարող են թողնել քահանայութիւնը և պահպանել իբրև աշխարհական էլի նոյն առաքելի խօսքի հիման վրայ թէ «ոչ ունիցին ժայժ, ամուսնացին», դալիս է այն եզրակացութեան որ չպէտք է թոյլ տալ քահանաների կրկնամուսնութիւնը։ Այսպիսով Տաճկահայոց բարձր հոգևորականութիւնը բացասական պատասխան է տալիս։ Ժողովրդի ձայնը չի լսուած։ Ստացուել է նոյնպէս Ամերիկայի երեսփոխանական ժողովի վճիռը, որով խնդրում են ոչ միայն քահանաներին թոյլ տալ կրկին ամուսնանալու, այլ և կուսակրօն հոգևորականութեան թոյլ տալ ամուսնանալ և վերացնել ամուրիութիւնը։ առ այժմ չենք լսել Ռուսահայոց թեմերի և Սինոդի կարծիքը, երբ կստանանք բոլոր կարծիքները, կտանք ընդհանուր հայեացք կանոնական և եկեղեցական ժողովական տեսակէտից, թէ արդեօք հակառակ է կրկնամուսնութիւնը եկեղեցական ժողովների կանոններին թէ ոչ։ թէ առաքելական օրէնքը «միոյ կնոջ այր» խօսքով միանգամայն ժխտում է կրկնամուսնութիւնը թէ ոչ։ այդ հարցերին կպատասխանենք յետոյ։ Առ այժմ կտամ հետևեալ հարցերը հակառակողներին։ Ո՞վ է ճշմարիտ քրիստոնեան և աւանդապահ քահանան, նա, որ երկրորդ ամուսնութեան մէջ է և ողջախոհ, թէ նա, որ այրի է և գայթակղութեան քար։ Ո՞վ է շիտակ մարդը և աւետարանի աշակերտ, նա որ երկրորդ ամուսնութեամբ ապրում է, խիղճը հանգիստ, կատարում է ճշտութեամբ իւր վրայ դրած սրբազան պարտքը, թէ նա, որ չի պահում երկրորդ անգամ հակառակ եկեղեցական օրէնքի համարելով, և ծածուկ ու աշկարա խայտառակութեան տիպար հանդիսանում։

Աւետարանը պարզութիւն ու մաքրութիւն է պահանջում, նա չի կարող երկրորդ պահակ «չի կարելի» պատրուակով անբարոյականութեան տեղիք տալ, այդ հիմունքով շատ ժողովրդականներ ստիպում են այրի քահանային տնկալուշ պահելով ողջախոհութեան սահմանից դուրս չգալ։ Առ այժմ այսքան։

Բ.

ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Վեհափառ Կաթուղիկոսը ի շարունակութիւն իւր նախկին տրուած կոնդակների, հրամայել էր ընտրութիւններ կատարել Աստրախանի թեմում Արիստակէս արքեպիսկոպոսի փոխարէն, Ալէքսանդրոպոլում Արսէն վարդապետի և Ղզլարում Թովմա վարդապետի փոխարէն։ Աստրախանում երկաստիճան ընտրութիւն կատարուեց և ընտրուեցին Բագրատ վ. Վարդազարեան և Մեսրոպ վ. Տէր Մովսիսեան, որոնց հրաժարումից յետոյ, հրամայեց Վեհափառը նոր ընտրութիւններ կատարել ուղղակի ձևով յենուելով Աստրախանի կոնսիստորիայի ցուցման վրայ։

Ալէքսանդրոպոլի փոխանորդի ընտրութիւններին Ղեկավարում էր Ցուսիկ եպիսկոպոսը, ընտրութիւնները կատարուել են ոչ հեշտութեամբ և ուղղակի ձայնաւութեամբ համախոսականների միջոցով, ընտրուել են Կարապետ և Մուրադբէկեան վարդապետները, առաջինը առաջարկուած է ի հաստատութիւն։

Ղզլարում դեռ չեն կատարուել ընտրութիւններ։

Տաթև պիտի նշանակուի նոր ընտրութիւն, երբ ձմեռը անցնի և ճանապարհների հաղորդակցութիւնը բացուի։ Տաթևի նախկին փոխանորդ Ներսէս վարդապետ Դիւանապետ նշանակուելով, առ ժամանակ թափուր մնացած աթոռի համար նշանակուեց Խորէն վարդապետ հսկելու ցորենների բաշխման վրայ մինչև նոր ընտրութիւնների կայանալը։

Ընտրութիւնները լինելով նոր ձև պաշտօնեաների և ժողովրդի համար, սկզբներում հարկաւ դժուարութիւններ պիտի առաջացնէին, մանաւանդ որ մեր ժողովուրդը սովոր չէ կանոնաւոր ընտրութիւններ կատարելու. միշտ ձգտում է իւր սովորութեան համեմատ աղաների ձայնով ամեն ինչ վերջացնել, որից ծագում են վէճեր, պառակտումներ և կուսակցութիւններ, որոնց արդիւնքն լինում է այն՝ որ

ժողովուրդը վերջ ի վերջոյ ստիպուած է լինում համաձայնականով դիմել Վեհափառին նշանակելու իւր ցանկացած անձանց պաշտօնի մէջ. այդ հիմամբ Վեհափառը առաջնորդ ուղարկեց Դաւրէժ Եղնիկ արքեպիսկոպոս Ապահունին, որը արդէն մտել է իւր պաշտօնի մէջ և հովում է Ատրպատական։ Նոյնպիսի դժուարութեան հանդիպեցին և Ալէքսանդրապոլում։ Ընտրութիւնների համար վերջնական և կանոնաւոր օրէնքներ կնշանակի միայն Կեդրոնական ժողովը, որի ընտրութիւնները կնշանակուին երևի Դումայի նիստերից յետոյ։

Այդ հիմամբ և Սինոդի նոր անդամների ընտրութեան խնդիրը ըստ նախկին կոնդակների մնաց մինչև Բ. Կեդրոնական ժողովի կայանալը, ուստի և Վեհափառն անհրաժեշտութիւնից ստիպուած Սինոդի կազմը լրացնելու համար առաջարկեց Մեսրոպ, Մխիթար և Եղիշէ վարդապետներին ի հաստատութիւն, համարելով Սինոդի համար Ռուսահայոց բոլոր թեմերի պատգամաւորների միջոցաւ ընտրութիւն նշանակելը անյարմար և գուցէ աննպատակայարմար, որովհետև Ներսէս Ե-ի գծած շաւիղը, այն է թէ Սինոդի, թէ կոնսիստորիաների և թէ հոգևոր կառավարութիւնների անդամների կէսը աշխարհականներից ընտրելը աւելի համապատասխան է մեր եկեղեցու ոգուն, քան այժմեան միակողմանի ձևը, իսկ այդ կարող է անել միմիայն Բ. Կեդրոնական ժողովը։

Գ.

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Ցայտնի է որ Ուսուցչական համագումարը Տփխիսում մշակել էր և տպել տուել «կանոնադրութիւն և ծրագիր Հայոց եկեղեցական տարրական դպրոցների». այս ծրագիրը քննութեան ենթարկուեց Ա. Կեդրոնական ժողովի ուսումնարանական սեկցիայի մէջ, թեթև փոփոխութիւն-

ներով ընդունուեց բոլոր ժողովի կողմից և վաւերացրուած առաջարկուեց կաթուղիկոսին։ Կեդրոնական ժողովը աւելացրեց կրօնի նկատմամբ հետևեալ ծանօթութիւնը «կրօնի դասերը պարտադիր չեն այն երեխաների համար, որոնց ծնողներն այդ կպահանջեն»։ Վեհափառ Կաթուղիկոսը հեռագրական հրամանով պատուիրեց Կեդրոնական ժողովի կողմից ընդունուած ծրագիրը գործադրել ուսումնարաններում մի տարուայ փորձով առանց կրօնի վերաբերեալ վերոյիշեալ ծանօթութեան, հրահանգելով կրօնի դասաւանդութիւնը պարտաւորական դարձնել բոլոր դպրոցներում։ Բ. Կեդրոնական ժողովը ի նկատի ունենալով նախորդ փորձերը ծրագրի նկատմամբ, երևի կտայ աւելի վերջնական ձև ծրագրին և կանոնադրութեան և տպագրելով կհրահանգի գործադրել կաթուղիկոսական վաւերացմամբ։

Այս տարի չյաջողուեց թեմական խորհուրդների, թեմական տեսուչների կարգումը և գործավարութիւնը, առաջին՝ Կեդրոնական ժողովի վաղաժամ փակմամբ, և երկրորդ՝ գաւառներում տիրապետող քաղցից և սովից տառապման պատճառով։

Դ.

ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Վեհափառ Կաթուղիկոսը կամենալով միօրինակութեան վերածել մեր դպրանոցների ծրագիրը՝ աչքի առաջ ունենալով այն գլխաւոր հանգամանքը, որ դպրանոցները պիտի լինին այնպիսի ուսումնարաններ, որոնցից աւարտածները լինին գործնական անձինք՝ պիտանի ազգային հաստատութիւններին և ծառայող ժողովրդի պէտքերին, հրամայեց Ճեմարանի, Շուշուայ, Ներսէսեան, Նոր-Նախիջևանի, Երևանի և Աստրախանի վարիչներին և հոգաբարձութիւններին ընտրել գործին հմուտ անձինքներից բաղկացած մասնաժողովներ՝ կազմելու մանրամասն ծրա-

գիրքեր բոլոր առարկաների՝ բոլոր դասարանների համար և ներկայացնել ոչ ուշ քան 1907 ապրիլի 1-ը։ Այդ ստացած ծրագրերը Նորին Օծութիւնը ժառդիր է յանձնելու ապագայ գումարուելիք Բ. Կեդրոնական ժողովին քննելու, մշակելու և ներկայացնելու Իրան վերջնական տնօրէնութեան։ Ծրագիր կազմողները ի նկատի պիտի ունենան այն կարևոր հանգամանքը, որ աւարտողները դժուարութիւն չզգային մտնելու Ռուսաց բարձրագոյն դպրոցները։



Ե.

Ժամանակն է պահանջում, թէ վանականութեան ներքին կեանքի փոփոխութեան կարիքը, վարդապետները և սարկաւագները հետզհետէ թողնում են հեշտութեամբ վեղարը մի պարզ հրաժարական յայտարարութեամբ և այդ թղթի կտորին ստորագրելուց յետոյ իրաւունք համարում աշխարհականի շոր հագնել և հոգևոր կազմից դուրս գալ։

Ընդունելով հանդերձ, որ կրօնական խղճի ազատութիւնը թոյլ է տալիս առանց այլևայլութեան թողնել այն կոչումը, որը իւր կամքի և յոժարութեան համապատասխան չէ, յամենայն դէպս ժողովրդական և 1900 տարուայ աւանդական կարգերը պահանջում են, որ վարդապետ դարձողները լրջութեամբ վերաբերուեն այդ հարցին, տարբերը փոխելով և թղթին ստորագրելով հեշտութեամբ ամեն ինչ վերջացած համարած չլինին, եկեղեցին, իւր կազմը, աւանդական կարգերը, հոգևորական կոչումն էլ իրանց կողմից ունեն իրանց բարոյական մաքսիմներն։

Այսպէս մի քանի ժամանակ առաջ թողել է վարդարդապետութիւնը՝ 1) Եղնիկ Գեանջեցեան. 2) այս տարի թողել է Արսէն Ղլտճեան, 3) թողնում է Թովմա վարդապետ, 4) հրաժարուել է Ներսէս Թումաղայեան։ Սարկաւագութիւնը թողել են՝ Գրիգոր, Սմբատ, Կոստանդին, Զուբարեան սարկաւագները։

Զ.

ՄԻ ՔԱՆԻ ԹՕՍՔ ԽՆԱՄԷԱԿԱՆ ՉՀԱՍԻ ԵՒ ԽՈՐԹՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Վեհափառի այս համարի կոնդակը խնամէական չհասի մասին լրացուցիչ դէպք է այն պակասին, որ զգացուում է մեր մէջ։ Մեր քահանաները մինչև իսկ կոնսիստորական ատեանները խնամէական աստիճանները սխալ են հաշուում, այդ սխալը իմ կարծիքով չհասկանալուց է առաջ գալիս և աստիճանների էութեան չըմբռնելուց, 5 աստիճանը համարում են 4, 6 աստիճանը 5, այդ մտքով միշտ դիմում են Սինոդին և Վեհափառին թոյլտուութիւն խնդրելով, որը ապացոյց է այն բանին, որ նրանք զգում են իրանց հաշուի սխալը և 4-րդ համարուած աստիճանը թոյլատրելի. այդ խնդիրը միանգամ ընդ միշտ պարզելու համար արձակուած է այս համարի կոնդակը։

Աստիճանների հաշուելը շատ հեշտ է և կատարուում է այսպէս։ Ամէն մի ծնունդ մի աստիճան է. երկու եղբայր երկու ծնունդ են, երկու աստիճան են, նոյնպէս երկու քոյր երկու աստիճան են, որովհետև երկու ծնունդ են։

Մարդ և կին ամուսնանալով հաշուում են «մէկ մարմին» իրանցից ծնուած զաւակների համար. մարդ և կին երկու ծնունդ են, ուրեմն երկու աստիճան իրանց երկու կողմերի համար։ Ահա ձևակերպութիւն։ 0—0 ամուսիններ։

Ենթադրենք կնոջ անունը Աստղիկ է, մարդուն անունը Տիգրան. Տիգրանի քոյրը Զարուհի և Աստղիկի եղբայրը Արշակ գտնուում են չորրորդ աստիճանում, որովհետև Տիգրան և Զարուհի երկու աստիճան են, Աստղիկ և Արշակ նոյնպէս երկու աստիճան, միասին կլինեն 4 աստիճան։

Զարուհին Արշակի հետ գտնուում են չորրորդ խնամէական աստիճանում, որը և անթոյլատրելի է։ Մեր քահանաները այս ձևակերպութիւնը համարում են երրորդ աստիճանի, ինչու. նրա համար որ ամուսիններ Տիգրան և Աստղիկ համարում են իբրև մի մարմին—մի աստիճան. որ ակներև սխալ է, որովհետև դրանք մի մարմին են կազ-

մում միմիայն իրանցից ծնուած որդիների համար և ոչ իրանց եղբարց և քոյրերի նկատմամբ, որոնց հետ ջոկ ջոկ վերցրած երկու ծնունդ են՝ ուրեմն երկու աստիճան։ Զարուհու տղան Մանուկը և Արշակի աղջիկը Նազլուն գտնուում են վեցերորդ աստիճանում։

Մեր քահանաները համարում են 5 աստիճան այն հիման վրայ, որ ամուսիններին նոյն սխալ հաշուով համարում են մի մարմին մի աստիճան։ Կոնդակը հրամայում է հաշուել ոչ 5 աստիճան այլ 6, ինչպէս որ հաշուում են բոլոր քրիստոնեայ եկեղեցիների կանոնիկոսները։

Ե՞րբ է մարդ և կին մի հաշուում. միմիայն մի դէպքում. ա՛յն է իրանց զաւակների նկատմամբ. օրինակ եթէ Տիգրանը և Աստղիկը զաւակ են ունեցել ձևակերպութեան մէջ 0—0 այսպէս չեն գծագրուում, հապա միացած այսպէս՝ 0, որոնց զաւակը այսպէս—0 ծնողք

0 զաւակ։

Այս ձևով եթէ հաշուեն մեր քահանաները ամենևին չեն սխալուիլ և բարձր ատեաններին դիմելու հարկ չի լինիլ, քանի որ վեցերորդ աստիճանի թոյլտուութիւնը իրանցից է կախուած։

Խորթութիւնը կարող է լինել ազգակցական և խնամական, բայց ընդհանուր առմամբ խնամական պիտի հաշուել. խորթութիւնը միշտ մի աստիճան աւելացնում է. օր. եթէ պարզ հաշուով 4 աստիճան է և խորթութիւն կայ մէջը, պէտք է՝ խորթութիւնը մի աստիճանի առաւելութիւն տուող հաշուելով, համարել պարզ հաշուով 4 աստիճանը 5 աստիճան. օրինակ. Զարուհին և Արշակը 4 աստիճան են, եթէ Զարուհին Տիգրանի խորթ քոյրն է, այդ դէպքում խորթութիւնը մի աստիճան համարելով, կստանանք որ Զարուհին Արշակի հետ 5 աստիճանի խնամութեան մէջ են գտնուում։

Ա. այժմ այսքան։

Է.

ԿՆՔԱՒՈՐԱԿԱՆ ՉՀԱՄԻ ՄԱՍԻՆ ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ

Վեհափառ Կաթուղիկոսը ազգակցական 7-րդ, խնամէական 5-րդ և կնքաւորական 3-րդ աստիճանի պսակների թոյլտուութիւնը դիւրացնելու համար հրամայեց Կոնսիստորեաների անուամբ արձակած շրջաբերական կոնդակներով իրաւունք տալ բոլոր հոգևոր Կառավարութիւններին, Բագուի, Բայազիտի և Ախալքալակի և Բեսարաբիայի ու Աստրախանի թեմերի գործակալներին թոյլ տալ վերոյիշեալ աստիճաններում պսակներ կատարել։ Կնքաւորական աստիճանները պէտք է համարել ըստ ճիւղաղրութեան Ներսէս—Ե-ի, այն է մինչև երրորդ ծնունդ. որը պիտի հաշուել այսպէս, սանիկը և կնքահօր որդիքը գտնուում են երկրորդ աստիճանում իրրև եղբայրներ, սանիկի որդին կնքահօր կամ սանամօր առմամբ թոռն է, ուրեմն երկրորդ աստիճանումն է, սանիկի որդին և կնքահօր որդին երրորդ աստիճանի մէջ են, ուրեմն իրաւունք չունին պսակուելու, սանիկի որդին և կնքահօր թոռը չորրորդ աստիճանի մէջ են, կարող են պսակուել։

Իսկ սանիկի և կնքահօր կողագիծները, այսինքն եղբայրներ, քոյրեր, մօրաքոյրեր, հօրաքոյրեր չեն մտնում կնքաւորական չհասի մէջ, նրանք բոլորովին անկախ կարող են խնամութիւն անել միմեանց հետ։

Կնքաւորութեան հետ առնչութիւն ունի և խաչքաւորութիւնը, երբ մէկը միւսի պսակի ժամանակ խաչը բռնում է, համարւում է նրա խաչ-քաւորը, սորա համար որոշ կանոն չունենք, միայն կարծում եմ որ խաչքաւորը իրաւունք չունի ամուսնանալու նրան հետ, որի խաչը բռնել է, և ընդհակառակը վերջինս խաչքաւորի կնոջ հետ։

Բոլոր թեմերի գործակալներին այդ իրաւունքը չտրուեց այն հիմամբ որ նրանցից շատերը կիսակիրթ են, չհասի աստիճանները չեն կարողանում որոշել և կարող էին սխալանքների մէջ ընկնել. իսկ Բագու, Բայազիդ, Ախալքալակ գործակալ նշանակուում են առհասարակ վարդապետներից, Բեսարաբիայի և Աստրախանի թեմերը ընդարձակ են և համեմատաբար աւելի պատրաստ քահանաներից գործակալներ ունեցող։

Ն. վ. Մելիք-Թանգեան.